



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՔԱԼԻՖՈՐՆԻՅՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ**  
**ԿԸ ՅԻՇԱՏԱԿԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ**

Քալիֆորնիա նահանգի Ծերակոյտը եւ Ներկայացուցիչներու Տունը, իրենց Երկուշաբթի, 9 Ապրիլ 2007-ի նիստին, վաւերացուցին բանաձեւ մը, որով Ապրիլ 24ը Քալիֆորնիա նահանգին մէջ կը յայտարարուէր իբրեւ Հայկական Ցեղասպանութեան յիշատակումի օր: Բանաձեւը ներկայացուած էր Ներկայացուցիչներու Տան 43րդ ընտրական շրջանի ներկայացուցիչ Փօլ Գրիգորեանի կողմէ:

Սոյն ժողովին, Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Սուշեղ Սրբազան Արքեպիսկոպոս Մարտիրոսեանի իբրեւ ներկայացուցիչ ներկայ գտնուեցաւ եւ բացման աղօթքը կատարեց Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Զինյ. Կոստանեան:

Ժողովին ներկայ էր նաեւ Հայաստանի գլխաւոր Հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, որ պաշտօնապէս ներկայացուեցաւ ժողովականներուն եւ առիթ տրուեցաւ որ Հայաստանի պետութեան կողմէ իր շնորհակալութեան խօսքը ուղղէ:

**ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ**

Յայտնենք նաեւ, որ Քալիֆորնիոյ կառավարիչ Առնոլտ Շվարցընէկի գրասենեակէն տրուած հաղորդագրութիւն մը կը յայտնէ, թէ ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, նահանգապետը ստորագրած է հռչակագիր մը, որ յիշատակելով 1915էն 1923 տարիներուն տեղի ունեցած ցեղասպանական արարքներն ու հակահայ հալածանքները, Քալիֆորնիա նահանգին մէջ Ապրիլ 22էն 29 երկարող շաբաթը կը նկատուի Հայկական Ցեղասպանութեան Յիշատակումի Օրեր:



**CALIFORNIA STATE LEGISLATURE COMMEMORATES**  
**THE ARMENIAN GENOCIDE**

On Monday, April 9, the California State Assembly and Senate passed Assembly Joint Resolution 15 which declares April 24, 2007 as the official Day of Remembrance of the Armenian Genocide. The resolution was initiated by 43<sup>rd</sup> district assembly member Paul Krekorian.

The opening prayer was conducted by Rev. Vahan Gosdanian, pastor of Holy Trinity Church in Fresno, who was representing H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Consul General Armen Liloyan also offered his remarks and gratitude on behalf of the Republic of Armenia.

As in previous years, Governor Arnold Schwarzenegger once again proclaimed April 22<sup>nd</sup> to the 29<sup>th</sup> as Days of Remembrance of the Armenian Genocide.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org), Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.